



PEARLS OF ARMENIAN HERITAGE

Յովհան Մամիկոնեան / Չենոբ Գլակ (8-րդ դար)

Ութերորդ դարու հայ մշակույթին մէջ ծաղկած աշխարհահայեացքին վրայ բացուող շատ հետաքրքրական պատուհան մըն է Յովհան Մամիկոնեանի պատմութիւնը եւ գրական գործը: Ան ինքզինք կը ներկայացնէ որպէս եպիսկոպոս Մամիկոնեաններու, եւ երեսունհինգերորդ վանահայր Սբ. Կարապետի վանքին:

Իր վկայութեամբ՝ գրած է Մամիկոնեան տան պատմութիւն մը, մաս մը հաւաքելով Իննակեան վանքին վանահայրերէն գործած ասորերէն աղբիւրներէ, մաս մը Մարմառա անուն Ուռհայեցի կրօնաւորի մը գրութիւններէն, բոլորը միասին 38 գլուխներով: Բայց մեզի հասած պատմութիւնը ունի միայն ութ գլուխներ, որոնցմէ հինգը Չենոբ Գլակի անունով է, իսկ մնացած երեքը Յովհան Մամիկոնեանի:

Ո՞վ էր Չենոբ Գլակ: Աւանդութեան համաձայն՝ ան ասորի վանահայր մըն էր Տարօնի Իննակեան վանքին: Սբ. Գրիգոր Լուսաւորիչ զինք կարգած էր Իննակեան վանքին մեծաւոր եւ հրամայած որ գրէր Հայաստանի դարձին պատմութիւնը: Այս պատմութեան մէջ մանրամասնօրէն կը պատմէ Լուսաւորչի եւ քրտմերուն միջեւ տեղի ունեցած պատերազմները, երբ Գրիգոր կը կործանէ Դեմետրէ եւ Գիսանէ աստուածուհիներուն Տարօնի մէջ եղած մեհեանները, եւ անոնց տեղ կը հիմնէ Սբ. Կարապետի վանքը: Այս գիրքը իբրեւ թէ գրուած պէտք է ըլլայ ասորերէն եւ յետոյ հայերէնի թարգմանուած:

Բանասիրական քննութիւններու հետեւանքով, Չենոբ Գլակի մասին աւելի իրապաշտ հասկացողութիւն մը ձեւացած է. այս գիրքին մէջ գոյութիւն չունի չորրորդ դարու իրադարձութիւններուն ծանօթութիւն, այլ առասպելական ձեւով ներկայացուած են ութերորդ դարուն տիրող ժողովրդական տեսութիւններ, այլափոխուած եւ խաթարուած պատմական տեղեկութիւններով, զոր խմբագիրը հաւաքած է Ագաթանգեղոսէ, Յակոբ Մծբնացիի վարքէն, Խորենացիին Պատմութենէն:

Հեղինակը շատ հաւանաբար Յովհան Մամիկոնեանն է, որ իբրեւ վանահայր Իննակեան վանքին նպատակ ունի այս առասպելախառն պատմութեամբ ապահովել վանքին կալուածները, ներկայացնելով ասոնք որպէս վանքին նուիրուած՝ Տրդատ թագաւորին եւ Գրիգոր Լուսաւորչի կողմէն:

Պատմական որ եւ է արժէք չունի այս գիրքը, բայց շատ կարեւոր վաւերաթուղթ է ութերորդ դարուն ժողովուրդին որոշ շրջանակներուն մէջ տիրող միտքերուն, ինչպէս թշնամիին ստորին ըլլալու հասկացողութիւնը, որ հիմն է հեգնական շեշտին որով կ'արտայայտուի անոնց մասին: Կարեւոր է նաեւ ոճին համար, որ շարժուն է եւ կեանք ունի. կը նկարագրէ բնական եւ իրապաշտ գոյներով, եւ ընթերցումը հաճելի կը դարձնէ երագ ընթացող խօսակցութիւններով:

(Քաղուած Հ. Կիրեղ Վրդ. Քիպարեանի “Պատմութիւն Հայ Գրականութեան” հատորէն)

